

ԲՈՒԺԱՆՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ

Պոչտային համար	12 մր.
Վեցամսյան	6 "
Ստամբուլի համար	15
Վեցամսյան	8
Բերնի կոմիտեի համար	3 s.
Վեցամսյան	1.50 "

Մանուգրան տար աստ-
ջին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսին հա-
մար 20 սանիսի է. երեքին
սանիսի անգլաներու համար
20 սանիսի կրչայ :

Վառնայի համար ձեռքի 10 սանիսի

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐՈՒԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹ ԶՈՐԵՔԸ ԱՐԹԻ ԵՆ ԴԱՐԱԹ ՈՒԵՐԸ

Նախկին և զորում զրկել
հոգրոնրիսան հաս-
ցիկն :

Редация на вѣстникѣ
Шаржумъ
1 мая
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Վրաստանի համար
ձեռքի
(20 ՄԱՅԻՍԻՄ)

Պոչտային համար
ձեռքի
= 15 ՄԱՅԻՍԻՄ =

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇԱՐՇՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՅՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԵԻԿ ՎՃԱՐԷ

ՀԱՅ ԱՂՋԻԿ ԵՒ ՀԱՅ ԿՆԻԿ

(Բ. Տերտչեկ)

Հայ աղջիկ, մարդը որուն սիրտը ևս տուած տարիսոր,
Եթէ քեզ շատ կը սիրէ, քեզի համար լոկ կ'ապրի,
Ու չի գտար ուրիշ յուզում, ուրիշ գորով փառաւոր,
Թէ ետաւէր ցած հոգևով միայն զքեզ կը խորհի,
Եւ անտարբեր կը մնայ ազգի յաւին անապին,
Չ'երթար կուռիլ քաջաբար թշնամոյն դէմ մեր դաժան,
Աղիկ, քու սէրդ եղծած է, խաթարած է այդ հոգին,
Թէ նա մեռնիլ չը գիտեր, դուն չես կրցած սիրելի զայն :

Հայ կնիկ, եթէ զատկը ըլլայ մեղկ, թուլամորթ
Վախ ունենայ վտանգէն, կեանքին վրայ գուրգուրայ,
Եթէ ապրի անտարբեր, վե՛հ զգացմանց անհաղորդ,
Անգիտակ իր պարտքերուն՝ մարդ ըլլալը չը ճանչնայ,
Հայրենիքի փրկութեան կուռի վճռական ժամին,
Եթէ քաջերու կողքին չը կանգնի ան այ զինուած,
Կնիկ, գորովդ եղծած՝ խաթարած է այդ հոգին,
Թէ նա մեռնիլ չը գիտեր, դու մայր ըլլալ չես կրցած :

Փ. Պոչիս 40 մայիս 1902

ԿԱՐՕ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Յարգելի Բուռնցքեանը, յե-
զախիտական տրամաբանութեամբ
Եւրոպայի հայ Ուսանողական Մի-
ութիւնը անւանում է Մուրացիկ-
ների Միութիւն և պահանջում է
որ մեր ուսանողութիւնը կախա-
զանից, բանախց եւ աքսորից չը
վախենայ ու ազգային ճակատա
գրական վայրկեանին իսկապէս
պարտաճանաչ ինտելիգենտ լինի :

Գեղեցիկ և իրաւացի պահանջ :
բայց տեսնե՛ք գործնական կեան
քի մէջ կարելի է պահանջել որ
Ուսանողական Միութիւնը զուտ
յեզափոխական ծրագիր ունենայ :

Մեր կարծիքով ոչ, Ահա թէ
ինչու. չը մոռանանք այն գառն
իրականութիւնը որ հայ ուսանո-
ղութեան մեծ մասը մինչեւ Մի-
ութեան կազմվելը բոլորովին
չէր հետաքրքրվում հայկական
գաղութիւնը, և դեռ այսօր ուսանո-
ղութեան մի մասը նոյն իսկ Մի-
ութեան ծրագրերը շատ յեզափո-
խական է համարում :

Այսօր Միութեան շնորհիւ, ու-
սանողութիւնը զբաղվում է հայ-
կական խնդրով, նա գործել է

ուզում, և դորձում է միայն եւ-
րոպայում, որովհետեւ այդ գոր-
ծունէութիւնը նրանից շատ չն-
չին զոհողութիւն է պահանջում
և ոչ մի վտանգ չի սպաւնում ի-
րեն :

Եւրոպայում գործելը օգտակար
է հայրենի Շատ րիչ. բայց այն
առաւելութիւնը կայ որ այդ
գործը կատարում է այն սարքը,
որը մինչեւ հիմա ձեռքերը ծա-
լած նստել էր. և իր ծրագիրը
իրագործելու համար գործ է ա-
ծում այն դրամը, որ ոչ հայ յե-
զափոխութեան և ոչ հայ զրքեր
հրատարակելու համար կը արվէ-
ին :

Մեր կարծիքով աւելի լաւ է
մի գործ կատարել, որչափ էլ որ
նրա օգուտը քիչ լինի, քան թէ
ոչինչ չանել : Եւրոպայի ուսանո-
ղութիւնը այսօր այդ փոքրիկ
գործը է անում և բաւարարու-
թիւն է տալիս հայ ժողովրդի
այն տարրին, որը Եւրոպայի վրա
յոյսեր ունի : Պ. Բուռնցքեանի
փափագած հայ ուսանողութիւնը
չենք կարծում որ երբ և իցէ
զոյութիւն ունենայ մեր կեանքի
մէջ. ի հարկէ խօսքը բացառու-
թիւնների մասին չէ :

Տասներկու տարի է որ մեր
յեզափոխութիւնը պաշտօնապէս
գոյութիւն ունի. տասներկու տա-
րի շարունակ հայ ժողովուրդը
ահագին քանակութեամբ զոհեր
ուեց, և փառաւոր էլ մարտեր
ունեցաւ. և այդ ահագին շրջա-
նի մէջ 12 հատ ուսանող չը գնաց
կուռի վայրը զոնէ իբրեւ պրօպա-
գանդիստ :

Եւ յանկարծ այդ ուսանողու-
թիւնից սպասել հրաշքեր. յան
կարծ նրա վրա մեծ մեծ յոյ-
սեր դնել. նրա առեւ խիստ
պահանջներ դնել, լը նշանակի
բոլորովին չը ճանաչել մեր ու-
սանողութիւնը :

Պէտք է գոհանալ նորանովինչ
որ անում են. ի հարկէ առանց
գոփեսաներ շապելու. պէտք է
գրանցից դուրս կորչել այն, ինչ
որ հնար է : Եւ ուրիշ ոչինչ : Ու
չնորհակալութեան արժանի են
այն մարդիկը, որոնք զեւ համ-
բութիւն ունեն դրանց հետ զը
լուխ ջարդելու և մի բան անել
տալու :

ԿԱՐՕ

ԿՈՎԿԱՍԻ ԴԱՏԸ

(Շատ անխնայ քիռն)

Պոլիտարիտար առհասարակ ամե-
նայառաջագիտ սարքն է. այն ճըն-
շումը, որ գիւղացին չէ զգում, ու-
րովհետեւ թէ համեմատելու մասշտաբ
եւ թէ հասկանալու կարողութիւնը
չունի, խորապէս զգում է ինքնագի-
տակից պրոլետարը, Գիւղացին միշտ
չէ տեսնում իր կեղեքողներին, իսկ
բանւորը ամեն օր, ամեն ժամ տես-
նում է իր ճնշողին, նա համեմատում
է իր շարքաչ կեանքը իր հեշտաւէր
տէրէրի փարթամ կեանքի հետ. նա
զգում է, թէ իր շարքաչ գոյութիւնը
պահելու համար ստիպւած է արիւն
քրտինք թափելու, այնինչ իր տէրը՝
բուրժուաները ձեռք ձեռքի չեն տա-
լիս, գոյութեան կուր չեն ճանաչում,
այլ միայն հազարներով վատնում են
հազարաւոր բանւորների ք տնքի ար
գիւնքը, որ նրանք ձեռք են բերել
առանց իրաւունքի : Երբոր պրոլե-
տարը յոգնած ոտքերը հազիւ քար-
տալով, բայց իր մէջքի վրայ զգալով

տնտեսական անորոք մարակը՝ ուտե-
լու կարիքը, շտապում է դորձարան իր
կեանքը մաշելու, նրա տէրը նստած
րէտինաւոր կառքի մէջ, ձեռում է
է փողոցներում, շտապում է իր ազա
մանգազարդ մէտրէսների մօտ փո-
ղերը եւ ժամանակը վատնելու : Պրո-
լետարը չէ կարող չըզայ այս բոլոր-
ը և նրա սանջւած, մաշած հոգու
խորքից մի օր գառն հոգոյի փոխա-
րէն բողբի մրմունջն է հնչում եւ
այդ ժամանակ նա միացած իր հազա-
րաւոր, միլիոնաւոր եղբայրների հետ
պատկառելի մի ուժ է ներկայացնում
եւ սկսում է հսկայական քայլերով
ընթանալ դէպի իր ազատութիւնը,
իր կապանքների խորտակումը :

Մենք գտանք մեր մարտիկ ոյժը,
մեր յեզափոխական զօրքի զինւորին,
դա մեր բանւորն է, որ կանգնած է
յառաջդիմութեան ճառագարնի վրայ
եւ արդէն սկսել է իր օրհասական
կտիւր կապիտալիզմի եւ կառավարու-
թեան դէմ : Մեր ինտելիգենցիայի
պարտքն է այսուհետեւ անտարբեր
հանդիսատես չը մնալ եւ թոյլ տալ,
որ օտարը առաջնորդի մեր բանւոր-
ին, մենք չենք վախենում, որ օ-
տարը մեր բանւորին սխալ ճանապարհ
հով կը տանի, սպարդիւն կը դար-
ձնէ նրա կոսիւր, մենք կարծում
ենք միայն, որ օտարը չէ կարող հաս
կանալ մեր բանւորի զգացումները
այնպէս, ինչպէս մենք, քանի որ նա
օտար է : Մենք կարող ենք միայն
մեր բանւորի հետ միասին սիրել մեր
հայրենիքը նոյն սիրով, պաշտպանել
մեր նորաթիթիթ կուլտուրան ոտնա-
կոխ լինելուց, ուստպման ձգոււմ-
ների հանդէպ հայտ թեան գաղափարը
բարձր և կենդանի պահել : Օտարը
այս զգացումները չունի և մեր բան-
ւորը, որին շատ անգամ բոլորովին
սխալ եւ անհեթեթ են բացատրում
բանւորական շարժման միջազգայնու-
թիւնը կարող է քիչ քիչ հետանալ
հայտ թեան գաղափարից : Մեր այս
ազգային պահանջները հեռու են շո-
վինիստական լինելուց, քանի որ
գրանք ճնշւած, հայաձեւած զգացում-
ների հարց են և այնպիսի զգացում-
ների, որոնք ինչպէս վերը պարզե-
ցինք պատմական գոյութեան իրա-
ւունքը (ոչգոն տէրրը) ունեն : Մենք
պաշտպանելով այդ զգացումները մեր
տանակոխ եղած սարքական իրա-
ւունքն ենք պաշտպանում, նոյն-
քան տարրական եւ անհրաժեշտ, որ-
քան ուտելու, բազմանալու իրաւուն-
քը : Դնելով մեր բանւորական շար-
ժումը նոյն ընկերա-սոսկալարա-
կան (սօցիալ-դեմոկրատիկ) հիմունք
ների վրայ, ինչպէս բոլոր քաղաքա

կրթութեամբ երկրորդում մենք կարող ենք եւ պէտք է անհրաժեշտ մրացնենք մեր ծրագրի մէջ նմանապէս ազգային հարցը, որը խորթ չէ միջազգային ընկերա-սովորակաւ ծրագրին: Բոլոր քաղաքակրթութեան երկրներին սօցիալիստները միջազգային լինելով հանդերձ ունեն եւ իրանց յատուկ ազգային գծերը: «Ընկերա-սովորակաւ կուսակցութիւնը, ասում է նշանաւոր գերմանական սօցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, պաշտպանում է բոլոր սփոքր մարդկանց» իրաւունքները: ոչ միայն ապագայում, այլեւ ներկայ կազմութեան մէջ: . . . Պրոլետարիատը շահագործման եւ ճնշման երզնայ հակառակորդն է, ինչ ձեւով էլ սքրտնք արտայայտին: նա բոլոր շահագործւածներին եւ ճնշւածներին նախամարտիկն է: «Նշանաւոր քան էրական կուսակցութիւնը կուսում եւ ազգային ճնշման դէմ: Եւ արդարեւ, ինչպէս պատմում է Կ. Ե. Կուսակցութիւնը, «Էնթուսիաստի» (*) հիմնելու շարժումը Յարի դէմ ապստամբութիւնն քանակական համակրութիւնը յայտնելու գաղափարն էր: «Էնթուսիաստի» ատմիկն համակրական ուղիքը եղաւ Էնթուսիաստի գերիներին ազատման կուսակցութիւնը: «Էնթուսիաստի» Անգլիայում ճնշւած իւրաւունքներին հարցը ուժեղ կերպով պաշտպանեց: Աւստրիական ընկերա-սովորակաւ կուսակցութիւնը ազգային հարցի վերաբերմամբ հետեւեալ որոշումներն է մրացրել իր ծրագրի մէջ (Բրիւննի Համագումար 1899 թւին)

1. Աւստրիան պիտի վերակազմւի ազգերի Դաշնակցական-Ռամկաւարական պետութեան:

(*) Միջազգային քանակական Միութիւնը (Էնթուսիաստի) Աստրիայում (Աուգրաստի) անունով 1864 թւականին հիմնւած կուսակցութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա. ԳԼՈՒԻ Բ.

Տիրացուի գնալուց հազիւ կէս ժամ էր անցել, երբ կրկին դուռը բացվեց: Տէրուէրը ներս մտաւ, ասանց ուղարկութիւն գործնելու Մաղիկեանի թրթիւմով ղեկըն, ժպտալով բարեւուց, նստեց և սեղանի վրայիս մի պապիրոս վերցնելով սկսեց:

— Հէր օրհնած, բոլորովին անից դուրս չես գալիս. ճգնում եմ, ինչ է:

Ասի գամ տեսնեմ ինչ ես անում. թէ մենակ ես ու պարապ, գնանք մեզ մօտ: Հէր օրհնած երկուստարկ չես նմանում. կարծես թէ ինձ պէս անապին ընտանիքով ես ծանրաբեռնված: ոչ ցաւ ունիս ոչ վիշտ: Գուհասակում ես կրակ էի, կրակ . . .

— Զբոսով եմ տէրուէր. դասերի ցուցակն էի կարգի բերում: Լաւ էր որ եկաք: Նկատեցի որ դուք ամբողջ շաբաթվայ մէջ միայն մի անգամ էք դասի եկել, ու այն էլ այսօր. եւ ամբողջ շաբաթվայ համար թւանշան էք գրել: Այդպէս լաւ չէ. չէ որ դուք պարոցից օտոնիկ էք ստանում:

2. Պատմական արքայական գատններին տեղ պէտք է կազմելն ազգային սահմաններով ինքնավար մարմիններ, որոնց օրէնսդրութիւնը եւ կառավարութիւնը կը հղան ընդհանուր, հաւասար եւ ուղղակի ընտրողական իրաւունքի հիման վրայ ընտրուած ազգային ժողովները:

3. Բոլոր համացեղ ինքնավար շքրջանները կազմում են միասին մի ազգային միացեղ գաղափարութիւն, որ իր ազգային հարցերը բացարձակապէս ինքնազուխ է վճարում:

Մենք ասանձնապէս շնչում ենք աւստրիական սօցիալ-դեմոկրատիայի այս որոշումները այն պատճառով, որ աւստրիական պետութիւնը իր լեզուներին եւ ազգերին բազմազանութեամբ նման է Ռուսաստանին: Աւստրիական օրինակը ժող համար մանկավարժական նշանակութիւն ունի: չը նայած իր սահմանադրական կառավարութեանը մանր ազգութիւններին իրաւունքները միմեկին ճնշած և այդ պատճառով վերջին տարիներում լեզուներին կոխը այն տեղ խիստ սուր վտանգաւոր բնութիւն է ստացել: մենք, խրատելով այդ օրինակից պիտի հէնց սկզբից ազգային խնդիրը որոշ կերպով առաջ դնենք, մանաւանդ, որ այդ հարցը մեզանից անջ Ռուսաստանի ուրիշ սզգութիւնները դրել են: «Հրէական ընդհանուր քանակական Միութիւնը», որը իրեն մի ինքնուրոյն գաղափար մրանում է ընդհանուր Ռուսաստանի սօցիալ-դեմոկրատ բանուորական կուսակցութեան» մէջ, իր շորորդ համագումարում ընդունել է հետեւեալ որոշումները, որ բերում ենք քաղաւածօրէն: 1. «Համագումարը ընդունում է, որ ընկերա-սովորակաւ կան ծրագրի հիման վրայ թույլատրելի չէ ոչ միայն մի գաղափարի օրինակութիւնը միւսի վրայ, ոչ միայն կառավարական ճնշումը ժողովրդի վրայ, այլ և մի ազգութեան մի լեզուի տիրապետութիւնը միւսի

վրայ: 2. Համագումարը որոշում է, որ Ռուսաստանի նման բազմազան ազգութիւններին բազմազան մի պետութիւն պիտի վերակազմւի ազգութիւնների գաղափարութեան, առաջ ամեն մի ազգութեան լիովին անկախութիւնը: Մեր պահանջն էլ այս է: ուրիշ ոչինչ: Բանուորական ազատութեան գործը չէ կարող իր վերջնական նպատակին, սեպտականութեան ընդհանրացման դերել, այլ ընթանալու է հետեւողաբար, քայլ առ քայլ, կուսակցութիւն մի քոքր յայտնութիւն մըսի վրայ, Բանուորական առաջին մեծ յաղթութիւն Ռուսաստանում կը լինի սահմանադրական կառավարութիւն ստանալը: որը իրապէս հետո է սօցիալիստական լիւնելուց: բայց նա կը շնչացնի բունուորի կոխը: Բայց սահմանադրութիւնը մանր ազգերի հաւասար իրաւունքներ չէ ապիս, դրա համար անթիւ ապացոյցներ կարելի է բերել: յիշենք լեհացիներին գրութիւնը սահմանադրական Գլխաւորում, մանր ազգութիւններին գրութիւնը սահմանադրական Աւստրիո-Հունգարիայում եւն:

Ա. Բուուրցիան (Շարունակելի)

ԵՆԻՐՈՎԱ ԵՆ ՄԱԿԵՂՈՒՄ

Ինչպէս ենք որ այժմ գտնուում են մեծ ալեկոծութեան մէջ, միայն յայտնի չէ թէ արդեօք ալիքները պէտք է խորտակւին թէ ժայռ տեղից գլորւի: Կա սպառնալիք ինչի էլ մենք չը գիտենք, բայց սա բնական օրէնք է թէ ալիքները երբէք չեն սպառել և աւելի կը սաստկանան քանի որ գնալով ժողովրդները խանգարում են գրանց: . . .

քահանայ լինելու էք պատրաստվում:

— Ոչ, ապահով եղէք, տէր հայր: ձեզ մրցակից լինելու բոլորովին արամաղիր չեմ: այլ կատարում եմ իմ պարտականութիւնը:

— Գիտեմ, գիտեմ, առաջին օրից հասկացայ որ շատ պարտաճանաչ մարդ էք: Այդպէս էլ ամեն սեղ խուսում եմ, ձեզ նման երկուստարները միշտ պէտք են մեր ազգի պայծառութեան համար: Ուրախ եմ որ ազատախոս լինելով հանդերձ պահանջւմ էք որ մեր մանուկները առանց կրօնի ուսման չը մնան:

Ես կը գրեմ այդ մասին Տէր Մարկոսին, այս նահանգի թեմական տեսչին: նա իմ լաւ բարեկամն է: ձեզ թող լաւ աչքով նայի: . . .

— Խնդրեմ տէրուէր, տէր Մարկոսի լաւ կամ վատ աչքով նայելու այնքան էլ ինձ չի հետաքրքրում: Ոչինչ մի գրէք: գովասանքի մասին է խօսքս:

— Վա, այսօր ինչ է պատահել: միշտ թախ պատասխան էք տալիս: Լաւ որդի, գնանք տուն, մեզ սպասում են: Ես խօսք եմ տւել որ անպատճառ քեզ սաննւմ:

Այդքան չոր խօսելուց յետոյ Մաղիկեանը տեւորդ համարեց մերժվալ տէրուէրին և համաձայնեց նրանց առը դնալ:

Մի ղեկիցիկի գարդարված գահլիճում, կոխ սեղանը շրջապատած նստել

Այս ալեկոծութեան առթիւ եւրոպական մեղկացած մամուլի մի մասը սկսել է քննադատութեան տարափներ սկսել Մակեդոնական կոմիտէի գլխին նրաներկայ գործելու եղանակի նրկատմամբ: նրա—Սօրքի թերթերից մինը «բարբարոս» է կոչում Մակեդոնացիներին, և Լոնդօնի «Սպիկեր»-ը խիստ կերպով քննադատելով նրանց գործունէութիւնը ասում է. «Զարմանալի չէ՞ որ այսպիսի պարագաներում բուլգար ազատականները (եղափոխականներին է ակնարկում) աշխատում են բարբարոսութիւններով պարտաւորել նրանց Սերոպային որ միջամտէ, և սրա համար այսօր մի միլիոն են այրում կամ սրբապղծում (???)»: միւս օր մի քանի թերթերից կարող ենք սպանում: կոմիտէն այնպիսի մի բանակալութիւն է հաստատել որը դերազանցում է թիրաքի բռնակալութեանը (???)»: . . . Այս թափած արեւից եւ արտասուքից յետոյ տարակուսելի է մնում թէ արդեօք Մակեդոնացիք պիտի կարողանան իրենց փոփառածը ձեռք բերել:

— «Այո», կը պատասխանէինք մենք այդ բարի և արեւից վախեցող եւրոպայի երեսին, այդ թափուած արեւից և արտասուքից յետոյ է որ պէտք է Մակեդոնացիներ իր ուղածը ձեռք բերեն, և այդ անտարակուսելի է, որովհետեւ դա է հղել և այդ պիտի լինի բոլոր ստրուկ ժողովրդներին ազատութեան ճանապարհը, Մովսիսական օրէնքի մարմնացումը միայն կարող է փրկել նրանց:

էին տէրուէրը, երեցիկը, երեցիկը իր կողմ և քէնի հետ: նրանց հետ էր և Մաղիկեանը: Տէրուէրի աղիկը, օրիորդ Աշխէն, յունական գեղեցկութեամբ, բայց շատ ապուշ ղէճքի արտայայտութիւնով, անկիւնում դանակ էր ամուսն երբեմն երբեմն իր գըլուելու արձանելով դէպի հեռերի կողմ կցկոտ բխօքեր էր փոխանակում:

Վերջապէս Օրիորդը դադարեց անջել: տիրուէրն դարձաւ Մաղիկեանին և հարցրեց:

Ինչպէս է, պարոն Մաղիկեան, լաւ ամուսն է:

— Ճշմարիտ, տիրուէր, ես ոչ մի գաղափար չունեմ երաժշտութեան մասին: ոչինչ չեմ հասկանում, դրա համար էլ չեմ կարող այդ մասին մի որոշ կարծիք յայտնել: Երբեմն ինձ թւում է որ ամեն մի գաղափար լաւ է ամուսն: Երբեմն էլ կարծում եմ որ ոչ ոք լաւ չէ ամուսն:

էհ շատ լաւ, այսօր դրանցից որն է միջամտեց Տէրուէրը:

— Բոլորն էլ սկսեցին բարձր բարձր ծիծաղել:

— Այս օր ինձ թւում է որ օրիորդը լաւ է ամուսն:

Կրկին ծիծաղ:

(Շարունակելի)

Ահա առիթ մեծ է հայերու կենդանի օրինակները ենք. ոչխարի նման շարժելով հրաւիրեցինք «Երազայի ու շարժութիւն» մեր վրայ, բայց ի՞նչ եղաւ այդ «ուշադրութեան» արդիւնքը, մի բան միայն. «Իսկզբէն հայեր», մի բան որը աւելի կոկոնելի գործընկեր մեր վերաբերու է զգացնել տուցեցաւ գաղտնի թիւերը. կեցածուր Երազայ. «Պարտաւէր» քո այդ բարի աշխատքը, երբ Հայաստանում հազարաւոր եկեղեցիներ, վանքեր և սրբարաններ այրուել, քանդուել, աւերակ էր դարձնում մահմեդականի հօրը, իսկ այժմ երբ տեսնում ես նոյն հարիւրաւոր եկեղեցիներ քանդու մահմեդականի մի մզկիթի ալիքը սոսկում է հոգիդ. «Պարտաւէր» քո այդ գթութեան հոգին երբ Հայաստանում հազարաւոր արանց, կանանց և... նոյն իսկ իրենց սօր արդանդի մէջ եղած մահակներին վայրենաբար կոտորում էր մահմեդականի սուրը, իսկ այժմ տարակոյտի մէջ ես գրում եմ ինչ թեան ասկ տառապող մի իշխուս մոլորողի սպառնալիքներ, որովհետեւ նա համարձակութիւն է ունեցել իր արիւնք ծնող զուգուկներին գլուխը ջախջախելու թափել... հակառակ «արիւնք խորշոզ բայց աւազակ» երազայի քմահաճոյքին...

Բայց մի վախենաք, Մակեդոնացին արգէն համարում է թէ իր ցանկացած ազատութիւնը «Երազայի բարի ուշադրութիւնից» չէ որ պէտք է գալ. «Արիւնք» ահա Ազատութեան ճանապարհը. «Ազատ» ահա ինչ որ պահանջում է Ազատութեան Առտուածը. և Մակեդոնացին իր զոհը հզար տոթեմբ կը բերէ ազատութեան սեպանի մօտ ու չի էլ թուլանայ իր ձեռքերը լանալ թշնամի արիւնքով: Փոյթ չէ թէ ինչոպեցին ինչ է խօսում, թեւադրում, նա իր ուղին կը շարունակէ ամենայն ստանաւորութեամբ և մահմեդականացած երազայի անհեթեթ յարձակումներին դէմ մի հեղինակ հայեցող կը ձգէ միայն «առաքինութիւնը» քեզանից չէ որ պէտք է սովորենք, Առաքին:

Արեւմտեան
Կեցցե՛ն Մակեդոնացիք
Կեցցե՛ն Մակեդոնական յեղափոխութիւնը

Լոնդոն 11. 8.

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Առեւնէ մը ի վեր, բարեկամներէն շատերը մասնաւոր նամակներով կը հարցնեն և կուզեն իմանալ թէ Ա. Ինչո՞ւ Ռուսմանաւորն վրայ խոտաւազած հետազոտութիւնս կուշայնեմ, Ի. թէ

Մամիկոնեան քահանայի նկատմամբ «ճարժում» մէջ սպառնալիքները յայտնուած թիւերէն բը ճշմարիտ են: Գ. թէ խառնակիչ խեղդուկ մը ի՞նչպէս քաղաքիս եկեղեցին ընդունուած է իբրեւ ձայնաւոր:

Այս հարցումներէն մտնաւանդ առջի երկուքը արգէն հրապարակի վրայ յուզուած գոյցէ օրինակներու համար ալ գրտնայ հետաքրքրական ըլլալով, յարմար կը սեպեմ անոնց պատասխանն ալ հրապարակու հարցոյցի:

1. Ռուսմանայի ուսումնասիրութիւնը ուշացնելուս պարզ պատճառը նոյն նիւթին համար հարկանհրաժեշտ եղած պատմական տեղեկութիւնները հատաքելով զբաղիլ էր: Ինչպէս է որ քիչ շատ լուրջ բան մը արտադրելու համար պէտք է պրպտել հին յիշատակաբաններ, եկեղեցիներու, գեղեցիկանաբարեւու արձանագրութիւններ, վկայութիւններ և երբեմն ալ ձերբոնիներու ասանդակէս լրամ ու խօսած հաւանական հատուածները: Յաւօր կը խոտոտուանիմ, որ նմանակարութեամբ ըրած ըստը փորձերս ու խնդրած տեղեկութիւններս մէջտեղ չը հանուելու տարիճան անկատար արդիւնք մը գոյացուցին. այս պատճառաւ կը ստիպուիմ միայն յատաշիկային ծանրանալ Ռուսմանայուն ներկայ կեանքին նկարագրութեան և պահանջներուն վրայ զանց ընելով պատմական միջին վազանս, այդ ժամանակամիջոցին հայաբնակ քաղաքներ անձամբ պատեւով լաւ մը սերտելէ վերջ վայն հրապարակելու պայմանաւ:

2. Մամիկոնեան քահանային վրայ գրուածները ստոյգ իրողութիւններ են և ան ալ միայն մէկ մասը իր անշնորք շահատակութիւններէն: Բանի այդ սոյնը բերեցան «ճարժում» մէջ բաւական ազդեցին յիշեալին վրայ, անանկ որ իր ընթացքը գէպի լաւ փոխելու նշաններ կամ ըրածներուն վրայ զվլումներ կը ցուցնէ: Եթէ երբէք յանգրդի գարձեալ գայթակղութեան քորը տնկել, այն ատեն կը փութանք հրատարակել այն բոլոր ազտոտ արարքները, որոնք Հմայեակ և իւթիւծեան եպիսկոպոսներու քաջ ծանօթ են ու պատրիարքարան ալ տեղեկագորուած:

3. Իրաւ է թէ Արթին Չէլիկեան անուն անձը հոս ձայնաւոր եկած է, բայց ոչ վերջնականապէս հաստատուած, ալ Չատկի առթիւ ստիպողական հարկ ունենալով քաղաքէս եկեղեցին կանչուած է աւսմամբար և պայմանով որ ատեն մը մնայ և լաւ մը փորձուելէ վերջ որոշուի իր բազը: Ըստ իս չեմ յուսար որ երջար մնայ, որովհետեւ ամեն կողմէ եկած պաշտօնական

նամակներ շատ արտուր գոյներով կը ներկայացնեն զինքը, մանաւանդ Գեօտեան ճէյի մէջ բրտմ խառնակութիւնները, որոնք եթէ լաւ մը կը խոսին ամբողջ քաղաքը, կոխներ, թաղ կանը պատարանին յանձնելու խնդիրներ, վարժարանը անկերպարան է ըսելով կուսովարութեան մատնելու ստորնութիւններ և ալ պայթեցնելով թիւերը, այն ալ միայն պատառ մը չոր հոցի համար: Գուցէ առթիւ պիտի ունենանք այս խնդրոյն վրայ ևս աւելի երկար խօսելու մօտ օրէն:

Ս. ԳՈՒՍԹՐ

ԿՏՐՈՒԿ ՊՍՏ ՍԻԱՆ

Սրբազան պատրիարքութիւն մըն է բարեկաւէլ ճարգութիւնս որ թիւնը կը բէ Ռիւնիցի սրն արիւշ բանով չըլլար. բայց ի՞նչ խօսելով, քացարեւով եւ վերջապէս միջազարի պարագաներուն վրայ ազդելով, ուղայն կան մարդիկ, որոնց ընտրութիւնը ոչ մի բանով չէ կարելի բարեփոխել, այսպիսիք գիտական լեզուի մէջ, բանին յոռի նշանակութեամբ կը կոչուին անտրու մարդիկ: Յուրի անտրուի մը որքան ալ խօսիք ու քացարեւք, ինչ միջավայրի մէջ ալ զնէք, անիկա իր գիտցածը կընէ, իր ըսածը կը կրկնէ ու առիթ կը փնտռէ, այսպէս կամ այնպէս, իր կիրքերուն յագուրդ սալ:

Ահա ձեզ օրինակ Շուվալի Պ. Վասակ Սիւնին, որքան կուզէք խօսեցէք անոր, ինչ եղանակով կուզէք քացարեւցէք, զոք չը պիտի յաջողիք սակայն զայն ուղղել, անիկան ուղղայ և եւ իր գիտցածէն—իմաստակութեանէն մազի շափ չի շեղի: Վայրկեան մը կընդունի ըսածներդ ու կը հաստատէ, բայց քիչ մը վերջը կը հերքէ, կամ ուղղուի հերքելի իրենց բանդարեւոյն մէջ, կը խօսի, կը գրէ, բայց ոչ բոսովն և ոչ ալ գրածէն բան մը կը հասկցուի: Ինչո՞ւ կուզէք, կարողացէք 443 թիւ «Շարժում» մէջ, վկայականին արժէքը խրաբոխի տակ Վասակի մեզ զէս գրած վերջին ներկայնապատում յօդուածը:

Այդ գրութեան մէջ, գիւղի մը միջնակարգ վարժարանի աշակերտ պ. Վասակ կընդունի թէ՛ Ռուսմեդական խորհուրդը, որ եւ է անձի ուսուցչական ձեռնհասութեան վկայական տալու համար, և թեպէս ինչ ուսմանց վիճակացոյցը աչքէ կանցնէ, պաշտօնական ձեռակերպութիւններ կը կատարէ, իսկ մը նկատողութիւններ կընէ ու յետոյ վկայական կուտայ: Այս ամենը կընդունի պ. Վասակ, բայց իր իմաստակութիւնը նուիրագործելու համար ձեռնարկութիւններով կը ձգտի գիտակից պաշտօնական մարմիններու վկայութիւնները ըրտն ալ առ ոչինչ համարիլ. անոնց գիտնալու որ իր միջնակարգ վարժարանի փոքրիկ գլուխով, կուզայ հանել կեղտոնական ուսումնական խորհուրդը քննադատելու սքիւմարութեան ամենաթանձր ստիճանին:

Ըսինք և կը կրկնենք—անոնց նորանոր մանրամասնութիւններու մէջ մտնելու—որ ուսուցչի վկայական

ստանալու համար, ներկայացուցինք մեր ուսմանց և պաշտօնավարութեանց վկայագրութիւնը, որոնք լիովին արտարարութիւնս տուին Ռուսմեդական խորհուրդի պահանջներուն և որոնց վրայ ճիշտութեամբ Առաջնական խորհուրդը ստույ մեզ վկայագրին ուսուցչական ձեռնհասութեան և վաւերացուած ազգային Պատրիարքարանէն և Կ. Պ. լայ պուլ կարական զանցկարութիւնը:

Այսօր ի ձեռին ունիմ այդ վկայականը, որը վաղուց ներկայացուցած եմ ուր որ անկէ, բայց եթէ կուզէ պ. Վասակ ինքն ալ տեսնել, մենք պատրաստ ենք ցոյց տալ ևս իրեն պայմանաւ որ ինքն ալ բարեճակի իր միջնակարգ վարժարանի հսկայ (Վիճակացոյցը մէջ տեղ գնել, Բացի այդ մենք ցոյց կուտանք նաև մեր ուսմանց վկայականը, այն պայմանաւ որ պ. Վասակ ակնոցները վարստնէ ու այնպէս դիտէ, որպէս զի բարեւէ թէ սխալ են մեր մտօին առած ասուեպատում տեղեկութիւնները:

Այս մասին առայժմ սոյսբան: Գալով վարժարաններու կանոնաւոր յառաջդիմութեան հարցին, իբրեւ ուսուցիչ, համեստութիւնը չը թալարտրի ինչ ալ մասին, այսինքն մեր գործունէութեան վրայ խօսել գնահատման այդ պատասխանութիւնը կը ծանրանայ կրթական պաշտօնական մարմիններու վրայ, անոնց բոսածը միայն—հակառակ պ. Վասակի կարծիքին—հիմք և արժէք կընայ ունենալ:

Թէև հոգաբարձութիւնը լուծուած է և ատենապետ էֆէնտին ապօրինաւոր կերպով հրաժարած է իր պաշտօնէն, սակայն զեւ կանգուն են ազգին եւ վարժարաններու շահերը պաշտպանող ուրիշ պաշտօնական մարմիններ, զեւ կանգուն է Շուվալի ազգային բոլոր գործերը ղեկավարող Պատրիարքականութիւնը, որու մէջ բարեբաղդարար միջնակարգ վարժարանի աշակերտ, պ. Վասակէն անհամեմատ աւելի հանրային և վարժարանական գործերէ հասկցող անհատներ կան և որոնք ուսուցիչները պաշտպանելու անոնց մօտին ներքողներ կարգալու որ եւ է թագոն նպատակ չեն կրնար ունենալ, քանի որ ուսուցիչները զայսօր այստեղ վաղը մի ուրիշ տեղ են:

Ահա մի կարուկ պատասխան, անա մի մեզմ գրութիւն, անա եւ փաստերը, տեսնենք ասկայն մեր պարտն Վասակը ուշրի պիտի գայ, չենք կարծեր, որովհետեւ ինչպէս փորձերը ցոյց կուտան, անիկա խօսուածներուն մօտիկ լինելով, գրուածները կարողաւ չի զգաստանար, անիկա այնպիսի իմաստակ մըն է, այնպիսի անորմալ մըն է, որն ուղղութեան բերելու համար ուրիշ միջոցներ ևս հարկաւոր:

Ասան Տօնիկեան

7 Մայիս 1902

Շուվալի

Յ. Գ. — Վերապահութեամբ ըսեմ նաև որ, զեւ վկայականս չըստացած այդ մասին պ. Վասակ Սիւնի գրած է Պօլիս և ի մէջի այլոց իմացուցած է Ռուսմեդական խորհուրդին, թիւիս նաև Մէարիֆին թէ՛ ո՞վ կամ ինչ պարագաներու տակ ձեկնած եմ Պոլսէն... Այս սոյսար նախանձն ու անհատական շահը, տեսէք թէ՛ ինչեր բնէ կուտայ մարդոց:

Ն. յն

